ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՄԱՐԿՈ ՁԱՐԻԿԵԱՆ ՈՐ Ի ԿԱՐԱԿԱՍ, ՎԵՆԵՍՈՒԷԼԱ

Գոհունակ սրտով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու երախտարժան զաւակիդ:

Սիրելի պրն. Զարիկեան, Ձեր ընտանիքի եկեղեցանուէր ընթացքի մասին լսել էինք բազմաթիւ անգամներ, տեղեակ դարձել Վենեսուէլայում բնակեալ մեր ժողովրդի զաւակների ազգային ու հոգեւոր կեանքի պայծառութեանը սիրեցեալ Ձեր ծնողների բերած բարի աւանդին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Ձեր քրոջ եւ հարազատների հետ կատարած այցի ընթացքին Մենք ուրախ առիթ ունեցանք ի մօտոյ ճանաչելու հաւատաւոր, եկեղեցասէր հայորդուդ եւ ականատես լինելու Ձեր ջերմ սիրուն ու նախանձախնդրութեանը՝ հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբօրրան Սուրբ Էջմիածինը: Գոհունակութիւն էր Հայրապետիս համար, որ այցելութիւնը Հայրենիք եւ Սուրբ Էջմիածին Դուք նշանաւորեցիք Մայր Աթոռիս տարածքի բարեկարգման հովանաւորութեան յանձնառութեամբ, հարստացնելով Ձեր ընտանիքի եկեղեցանուէր իրագործումների պերճախօս շարքը: Առ Աստուած փառաբանական աղօթքն է Մեր շուրթերին, որ աշխարհասփիւռ մեր ժողովրդի զաւակները իրենց հոգիներում կրում են լուսապայծառ խորհուրդը Աստուածատես Սուրբ Էջմիածնի եւ աներեր պատրաստակամութիւնը՝ հոգալու նրա յաւէտ շինութեան ու պայծառութեան համար:

Սիրելի պրն. Զարիկեան, Ձեր հաւատաւոր ու ազգանուէր ոգու եւ մեր Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին բերած արգասաւոր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ

օրհնութեամբ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ Ձեր ընտանիքի անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 582